

Կը սպասենք մինչև որ եղանակը լաւանայ, ցուցէ հեռագիրներով բովանդակութիւնն էլ կը փոխվի: Նրեռւմ է որ պս տարի եղանակը ամեն տեղ պնքքան վատ է, որ ամեն երկրներում խօսոււմ են միմախն եղանակի վրա,

Բերլինի աշխարհագրական ընկերութիւնը ապրիլի 30-ին իր հիմնադրութեան 50 երորդ տարեգարծի հանդէսը կատարել է: Գերմանիայի կայսերան իշխանը, Փրանսիական զինուորի պետ Սէն-Վալլէն և շատ միջոցներ ներկայ են եղել այդ հանդիսին: Օտարազգի ընկերութիւններից շնորհաւորութեան համար ուղարկված գրութիւնների մէջ նշանաւոր է եղած Փարիզի աշխարհագրական ընկերութեան կողմից կարգացված ուղերձը որ վերջացած է եղել այդ բառերով: «Պարսիկ թէ այսօրվայ հանդէսը օգնէր գիտութեան միջոցով ժողովուրդները կղերայրացնելու: Այս բարեմալութեան համար ծախսահարել են բոլոր ժողովականները: Աւելի սաստկացել են ծախսահարութիւնները երբ ներկայ եղողները տեսել են որ կայսերական իշխանը ոտի կանգնելով, սեղմում է Սէն-Վալլէնի ձեռքը:

ԹԻԻՐԲԻԱ

«ГОЛОСЪ» լրագրի պատահական թղթակիցը Կ. Պոլսից հաղորդում է մայիսի 2-ին հետեւեալը: «Այս օրերս միայն իմացայ հետաքրքիր մանրամասնութիւններ հայոց ներսէս պատրիարքի տեսակցութեան մասին Մեծ Իշխան Գլխաւոր հրամանատարի հետ Սան-Ստէֆանոսում: Ամենից առաջ ներսէսը իր խոր երախտագիտութիւնը յայտնեց, թիւրքաց հայերի պատգամաւոր Խորէն Նարէկ աբղէպիսոպոսի լաւ ընդունելութեան մասին Պետերբուրգում: Սրանից յետոյ ներսէս պատրիարքը ներկայացրեց Նորին Բարձրութեան մի կարծի գրութիւն, այն անցքերի մասին որոնք կատարվել են Հայաստանում ուսուցյ յետ քաջկերպ յետոյ: Ահա այս գրութեան ամենանշանաւոր կէտերը:

1) Քուրդերը կորստագցին Մուշի Ս. Կաթակա վանքը և տարան 1,500 գլուխ տաւար: 2) Խնիսի շրջակայքում 3,000 քուրդերը հայոց գիւղերում քար ու քանդ արին եկեղեցիները, միացնելով իրանց անկարգութիւնների հետ կանանց և աղջկանց բռնաբարութիւնը և սովորական կոտորածը: 3) Խրեարի գիւղում (Բիտլիսի մօտ) 60 քուրդեր զաւաթ մէկ հայի մօտ հիւր, իրանց խնջոյքը տանտէրերի կողմանքով և կոտորածով վերջացրին: Առհասարակ Մուշի և Էրզրումի

Ֆելիտոն խմբագրին ցոյց տալուց առաջ (ամեն նիւթ տպարան ուղարկելուց առաջ խմբագրին ենք ցոյց տալիս), կարդացի ձեռագիրը բարեկամներէս մէկին:

— Ֆելիտոնը լաւ է, ասաց նա ինձ կարգացած ուղարկութեամբ լսելուց յետոյ, բայց մի բան է պակաս՝ կանանց վրա քիչ են խօսում ֆելիտոններից մէջ: Իսկ առհասարակ ֆելիտոնը առանց կանանց — ֆելիտոն չէ:

— Եւ էլ գիտեմ որ այսպէս է, բայց ինչ անեմ, ինչ կանանց վրա խօսեմ, և ինչպէս խօսեմ նրանց վրա, երբ գրիթի ոչ մի կին չեմ ճանաչում, ոչ մէկ կնոջ հետ չեմ տեսնվում, կանանց հասարակութեան մէջ չեմ լինում:

— Հատ վատ ես անում, պատասխանեց բարեկամս, կանայք քո գրվածքներին շատ նիւթ կը տային...

— Եւ վերջապէս ինչ կանայք կան մեր հասարակութեան մէջ:

Այս օրերս անցնելով Ալէքսանդրիան այցելով, տեսնում եմ այգու նստարաններից միին վրա իմ ծանօթներից միին, մի հայ երիտասարդ գործակալատարին մի օտարուհի աղջկայ հետ նրստած:

Միւս օրը պատահելով երիտասարդին, ես հարցնում եմ նրան ով էր այն աղջիկը:

— Դա իմ հարսնացու է, պատասխանում է ծանօթս:

— Ուրեմն դուք վճռել էք պսակվել մի օտարուհի հետ, ուրեմն ձեր խղճմանը չէ տանջում ձեզ, որ ձեր երեխաները հայ չեն լինի...

— Կոնքով նրանք կարող են հայ լինել պատասխանեց երիտասարդը, բայց ի հարկէ աղ-

ջըջականներ ահի և սարսափի մէջ են գտնվում այս գաղան քուրդերից: Զէյթունի հայերը պակաս ներութիւններ չեն կրում: Նոքա արդէն պատգամաւորներ ուղարկեցին Կ. Պոլիս խմբագրելու այս անկարգութիւնների առաջն առնել:

Այս բոլորի մասին Կ. Պոլսի հայոց պատրիարքը բողոքեց արդէն Բ. Կրան առաջ, և թիւրքաց վերոյիշեալ գաւառներում հեռագրեց ում հարկն էր, հրամայելով քուրդերի բարբարոսութիւնների առաջն առնել: Բայց այս կարգադրութիւնները թէ ի՞նչ հետեւանքներ կունենան — դժուար է գուշակել: Կ. Պոլսի կառավարութիւնը այնպէս թոյլ է, որ իրանք թիւրքերը պակաս ներութիւններ չեն կրում այդ մի և նոյն քուրդերից:

Պատրիարքը դիմեց Մեծ Իշխանին ամենախնարհաբար խնդրելով տեղեկութիւն տալ այս բանի մասին Փազաւոր Կայսրին: Միայն նրա մէջն են հայերը տեսնում իրանց փրկութիւնը և միայն իսկապէս նրա վրա են դնում իրանց յոյսերը: Հայերից շատերը ուղղակի այն միտք են յայտնում, որ միայն ուսուցյ Կայսրը կարող է քուրդերի բարբարոսութիւնների վերջ դնել ինչպէս այս բանը խոտացած է խաղաղական դաշնագրի 16-րդ յօդուածով:

Ի միջի այլոց, հաստատ աղբիւրից ինձ հաղորդում են, որ Բօզոստոի շրջականերում բնակվող քուրդերը, ներսէս պատրիարքին խնդրեցին դիմել խնդրելով Մեծ Իշխանին վերջ դնել յոյսերի տուած ներութիւնները, որոնց ձեռքում գտնվում է Բօզոստոի կառավարութիւնը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքի լրագիրներից միւր յայտնում է թէ 200 հազար զբաղմից աւելի վճարված է գաւառան անձերին որ ապստամբութիւնը գրգռեն և տարածեն Եպիրոսում: Կամաւորների նոր խումբեր կազմվում են ամեն օր: Բայց վերջին հեռագիրներից երևում է որ Անգլիային աջակցել է իր միջամտութիւնը ընդունել տալ թէ Թիւրքիային և թէ ապստամբների գրելաւորներին Քէսաթլայում: Կրիտում մի և նոյն աջողութիւնը չէ ունեցած Անգլիան: Կղզու ներքին կողմերը դտնվող ապստամբները զինված մնում են իրանց լեռներում և չեն ընդունում որ և ինչ պայմանով նորից

գութեամբ, ողով և լեղուով դժուար թէ կարողանան հայ լինել: Հարսնացուս գերմանուհի է, Նա շատ լաւ աղջիկ է և ես նրան շատ եմ սիրում, թէ ես նա շատ հասարակ աղջիկ է. նա մի գարեջրատան մէջ աղախին է եղել:

— Միթէ ամբողջ Թիւրքիայում չը գտաք մի հայուհի, որին սիրելիք, միթէ հարկաւոր էր անպատճառ մի օտարուհի կին ուղել...

— Պարոն, միթէ դուք չը գիտեք որ հայուհու, մինչև անգամ ամենահասարակ Թիւրքիայի հայ աղջկայ հետ պսակվելը ինձ պէս մարդու նիւթական կարողութիւնից վեր է: Վեր առնելով մի հայ աղջիկ ինձ տարեկան երեք, չորս հազար րուբլից պակաս չի նստի կեանքը: Իսկ ես հասարակ առեւտրական գործակալատար եմ, ամսական 60 րուբլ եմ ստանում: Այդ փողով, թէ ես շատ համեստ կերպով, ես այնու ամենայնիւ կարող եմ ապրել մի օտարուհու հետ, բայց մի հայուհու հետ անկարելի է...

— Ի՞նչի չէք վեր առնում մի հայ աղջիկ աղքատ ընտանիքից:

— Կրանք աւելի էլ պահանջող են, քան թէ ունենորները: Բացի սորանից, ինձ պէս մի հասարակ գործակալատարին կրթված աղջիկ չեն տայ, իսկ մեր աղքատ հայ շրջանների աղջիկները չը նայելով որ նոյնքան և աւելի պահանջող են քան թէ մեր հարուստները, մի և նոյն ժամանակ սարսափելի տգէտ և անկիրթ են: Իսկ մի այդ տեսակ գերմանուհի, չը նայելով որ հասարակ աղախին է, շատ լաւ գիտէ իր մայրենի լեզուն, ծանօթ է իր ազգի գրականութեան հետ, չէ խորշում ամենատարբեր և ամենաժանր աշխատանքից, խնայող է, սովոր է աշխատանքին, բացի սորանից ունի այնպիսի բարձր բարոյական սկզբունքներ, այնպիսի նուրբ գաղափար-

մանել թիւրքաց տիրապետութեան ներքէ: Բացի ծովազետայ քաղաքներից մի քանիսը, ամբողջ կղզին կորած պէտք է համարել թիւրքաց տէրութեան համար: Նպիրոսում, Քէսաթլայում և Մակիդոնիայում ծագած ապստամբութիւնը այնպիսի աջողութիւն չունեցաւ որչափ Կրիտ կղզում, որովհետեւ այդ տեղերի բնակիչները բոլորովին պատրաստված չէին, զէնք չունէին, ոչեւ կազմակերպութիւն չունէին, վստահութիւն չունէին նրանց վրա որ իրանց ուղարկում էին իբրեւ ազատարաններ, և գուշակում էին որ Թիւրքիան այլ ևս ազատված իր բոլոր զօրքերը և նաւատորմը ուրիշների դէմ հանելուց նրան դիւրաւ կաջողվի ճնշել ապստամբական որ և ինչ շարժում:

Յունաստանը շատ հոգս է անում Նպիրոսից և Քէսաթլայից եկած գաղթականների համար, որոնք լրված են սահմանակից բոլոր քաղաքներում: Յոյները ամեն կերպով աշխատում են այդչափ թշուառների պէտքերը հոգալու համար: Զենովայի Կարմիր խաչի հեղինակական ընկերութիւնը մեծ օգնութիւններ է արել թիւրքաց բարբարոսութեան այդ զոհերին:

Աթէնքի լրագիրների գրածներին նայելով, Յունաստանի հաշուի համար Փարիզում շինել տրված պատերազմական գործիքներում խորհրդակցութիւններ են եղել:

Յունաստանը գնել է Անգլիայից մի սրնութաց շղթանա որ բերված է Պիրէի նաւահանգիստը: Թնւանթներ, տորպէդներ և պատերազմական ամեն տեսակ գործիքներ բերվում են արտասահմանից Յունաստան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Եւրոպական լրագիրները հաղորդում են որ այս օրերս Ֆրանսիան կորցրեց իր երեկի մարդիկներից միին: Դ. Ի. Ֆ. օ. ր վախճանվել է: Վերջին ժամանակները այդ պետական մարդը, որը քաղաքական ապարդիւ շատ նշանաւոր է եղել, հատել էր իր հայրենիքում պետական կեանքի ամենաբարձր աստիճաններից միին: Նա ֆրանսիական միլիտարութեան միլիտար-նախագահ էր, և կարելի է ասել նոյն իսկ այն ժամանակ երբ Ֆրանսիան ճգնաժամի մէջն էր գտնվում: Դիւքօրի թագման հանդէսը, ինչպէս հաղորդում

ենք պատիւ, աղնութեան, կրօնի և ընտանեկան պարտաւորութեան վրա որ երանի թէ մեր ուսում առած հայ աղջիկներն էլ ունենային:

Եւ խօսք չը գտայ այդ դատողութիւններին պատասխանելու համար:

Նշանօթիս խօսքերը իմ մէջ ծնեցրին ամենատխուր մտածմունքներ:

Միթէ, մտածում էի ես, մեր երիտասարդների աշխատող դասը ստակցված կը լինի ընտանեկան կեանքի երջանկութեանը հասնելու համար թողնել հայ շրջանները, թողնել հայութիւնը և դիմել օտարուհիներին...

Վայ այն աղբին, որի մէջ աշխատանքի գաղափարը ստոր, մարդուս արժանաւորութեան ցած գաղափար է համարվում...

Մեր հայոց ամենաաղքատ ընտանիքներում աղջկան մանկութենից չեն ընտելացնում աշխատանքի դաղափարին, բայց օրօրոցից ներշնչում են նրա մէջ հարստութեան և փառքի ունայն մտքերը:

Մեր աղքատ ընտանիքի մայրը շնորհաւորելով իր աղջկան նրա ծննդեան օտոնը և իր կարողութիւնից վեր մի հարուստ ընծայ անելով նրան, համբուրում է նրան ասելով՝

— Յանկանում եմ քեզ որ քո ամբողջ կեանքդ անցնես ոսկու և բրդի լանտիւնի մէջ:

Օրօրոցից արդէն հայ յիւսիս ծնողները մղուցնում են իրանց աղջկայ գլուխը, թէ նա պէտք է աշխատէ արտաքին ձեռքով հանել լինել: Գրական երիտասարդներին, պէտք է աշխատէ ձեռք գցել մի հարուստ մարդուց, որ կարողանայ լաւ չորեր, լաւ տուն, անթիւ ծառաներ ունենալ...

Բայց ոչ ոք մեր ծնողներից երեք չէ դիմել

են լրագիրները, կը կատարվի պետութեան հաշուով:

— Աւստրիական դեսպան Զիլի, ինչպէս հեռադրում են Լոնդոնից, յայտնեց Բ. Կրանը, որ Աւստրիան անհրաժեշտ է համարում ժամանակաւորապէս զբաղել իր զօրքերով Բօսնիա նահանգը:

— Վէրսայից մայիսի 2-ին (14) հեռագրում են, որ Կամբէտտա կրկին ընտրվեցաւ Բիզդէտային յանձնաժողովի նախագահ:

— Բուխարէստում տիֆ հիւանդութիւնը սաստիկ տարածված է:

— Կ. Պոլսից հեռագրում են մայիսի 8-ին թէ «Herald» լրագիրը հրատարակել է մի բժշկից գրված նամակ որ բացատրում է թէ անգլիական նաւատորմը կը պարտաւորվի թողնել Եգիպտի նաւակայքը ջերմի հիւանդութիւնների պատճառով:

— Կ. Պոլսից հաղորդում են հետեւեալ մայիսի 9-ին: «Բաթումից ուղարկված մի հեռագիր որ պատմում է Լիվանիայի գրավվել ուսանելից, ասում է թէ թիւրքաց պահպան զօրքերը յետ քաջկերպան ուսուցյ զօրքերի առջև որոնք աւելի բազմաթիւ են քան թէ իրանք, բայց մահմետական ժողովուրդը դիմադրեց և ուսանելը մղտան Լիվանիա, դիմված ժողովուրդի հետ կռուելուց յետոյ:

— Բերլինից հեռագրում են «Kolnische Zeitung» լրագրին որ կոմս Դուվալով Ս. Պետերբուրգ գնալուց առաջ խորհրդակցութիւն է ունեցել իշխան Բիսմարկի հետ, թէ պէտք այս վերջինը դեռ կատարելապէս առողջացած չէ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԻՑ

ԼՕՆԻՈՆ, 11/23 մայիսի Կոմս Դուվալով խորհրդակցութիւն ունել Սալիսբուրի մարկիզ հետ:

Կ. ՊՈԼԻՍ, 11/23 մայիսի Անգլիական նաւատորմը կը վերադառնայ Իզմիրեան ծոցը: Բ. Կրան շինութիւնը ոչնչացրած է հրդեհով: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մայիսի: Պետական բանկի 5% տոմսիւ առաջին շրջանի արժէ 97 ր. 75 Կ., երկրորդ 95 ր. 25 Կ., երրորդ 95 ր. 12 Կ., չորրորդ 95 ր. 25 Կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսիւ արժէ 230 ր. 50 Կ., երկրորդ 224 ր. 75 Կ., արեւելեան 94 ր. 75 Կ., ոսկին 8 ր. 40 Կ.: Տրամադրութիւնը ամուր է:

և չէ դիմում իրանց աղջկան այս տեսակ խօսքերով:

— Յանկանում եմ քեզ որ այնքան ուսում առնես, այնքան կրթես ուղեղդ և միտքդ, որ կարողանաս քո սեփական աշխատանքով ապրել, և այդպիսով արժանի դառնալ մարդկերանց պատիւի և յարգանքի և քո ամուսնու իսկական սիրոյ:

Տխուր է մտածել որ մեր հայ արուեստաւորները, գործակալատարները, աշխատող դասը, չքաւոր երիտասարդները չըմանը չը գտնելով հայ օրիորդները չըմանում, այդ զարգարված կուկլան երի մէջ, իրանց յարմար, ճամուս, կրթված, աշխատող ամուսինները, — ստիպված կը լինեն դիմել օտարուհիներին...

Այն ժամանակ երբ մեր աշխատող երիտասարդները բազմութիւնը, մեր մշակ նոր սերունդը այդպիսով ստիպված կը լինի հեռանալ օտարանալ հայութենից, — մեզ կը մնալ դիմելով հայութեանը և հայոց ընտանիքին, երգել նրանց հետեւեալ կուպլետը:

Արժանի
Արժանի
Յիւսիս մի լինի
Յիւսիս մի լինի...

Այս, կրկնում եմ, վայ այն աղբին, որի մէջ աշխատանքի գաղափարը մարդուս արժանաւորութեան ստոր գաղափար է համարվում...

Առիւթ

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ